

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի տպագրությունը հովանավորելու համար

The Institute of Ancient Manuscripts after
Mesrop Mashtots “MATENADARAN”
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

LUSINE TUMANYAN

**MONASTIC RULES AND RITUALS
AMONG ARMENIANS**

BOOK ONE

Yerevan
2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ЛУСИНЕ ТУМАНЯН

**МОНАШЕСКИЕ ПРАВИЛА
И ОБРЯДЫ У АРМЯН**

КНИГА ПЕРВАЯ

Ереван
2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

**ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՒ ԾԻՍԱԿԱՐԳԵՐԸ
ՀԱՅՈՑ ՄԵՋ**

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 271.72:94(479.25)
ԳՄԴ 86.373.2+63.3(5Հ)
Թ 946

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ **Կարեն Մաթևոսյան**
պատմական գիտությունների դոկտ., պրոֆ.

Թումանյան Լուսինե

Թ 946 Վանականության կանոնները եւ ծիսակարգերը
Հայոց մեջ / Լ. Թումանյան. Եր.: Մաշտոցի անվան
Մատենադարան, 2023. Գիրք առաջին.- 240 էջ:

Գրքում ներկայացված է վանականության կարգերի հաստատումը Հայաստանում՝ կապաղովկյան և եզիպտական ազդեցությամբ: Համախմբված և վերլուծված են այն կանոնները, որոնք կիրառվել են հայկական վանքերում: Ներկայացված են անապատականների ու վանականների ուսեստը և Սեղան օրհներյու կարգը: Լուսաբանված են հայկական սկզբնաղբյուրների վկայությունները Վանական ուխտադրության ծիսակարգերի մասին, և վերլուծված է սույն ծեսերի բովանդակությունը: Գիրքը նախատեսված է վանականությամբ հետաքրքրվող անձանց, հայագետների, աստվածաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 271.72:94(479.25)
ԳՄԴ 86.373.2+63.3(5Հ)

ISBN 978-9939-897-25-7
DOI: 10.57155/EJHA8534

© Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, 2023
© Թումանյան Լուսինե, 2023



*Նվիրվում է Հայոց Մեծ եղեռնի
նահատակների անմար հիշատակին*

*Մանրանկարի ծաղկողը՝
Թորոս Ռոսլին (ՄՄ ձեռ. 10450)*

ԱՌԱՋԱԲԱՆ

«Եթէ մէկը կամենում է հետեւել ինձ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ իմ ետեւից» (Մատթէոս ԺԶ 24): Տերունական այս խոսքերը, արդարև, վանական կյանքի առանցքն են, մի կենսակերպ, որն անջնջելի հետք է թողել համամարդկային, այդ թվում՝ հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մեջ:

Մեր ուսումնասիրությունը խորագրել ենք «Վանականության կանոնները և ծիսակարգերը Հայոց մեջ»: Սույն՝ առաջին հատորում, արծարծված են մի քանի հիմնական թեմաներ: Նախ՝ անդրադարձել ենք վանականության սկզբնավորման պատմությանը, ապա մանրամասն ներկայացրել վանական կարգերի հաստատումը Հայաստանում՝ կապադովկյան և եգիպտական վանական կարգերի ազդեցությամբ: Հարկ է նշել, որ նոր տեսանկյունից ենք դիտարկել վանականության սկզբնավորումն ու ձևավորումը Հայոց մեջ, և այս հարցի շուրջ մեր մոտեցումը տարբերվում է մինչ այժմ եղած տեսակետներից:

Ուսումնասիրության ընթացքում առանձնապես կարևորել ենք Մշո Սուրբ Կարապետ վանքի հիմնադրումը (կապադովկյան ազդեցությամբ) և Բարսեղ Կեսարացու կանոնադրության գործածումը: Վերլուծելով հայկական սկզբնաղբյուրները՝ կարծում ենք, որ Կապադովկիայում համակեցական վանականության սկզբնավորումը և վանական կանոնադրության ձևավորումը նախորդում է եգիպտականին, քանի որ Մշո Սուրբ Կարապետ վանքն իր հիմնադրման թվականով (303 թ.) և գործուն կանոնադրությամբ նախորդում է Եգիպտոսի Տաբեննայում Պաքոմիոս Մեծի հիմնադրած վանքին: Ինչպես գիտենք, Ընդհանրական Եկեղեցու սուրբ Բարսեղ Մեծի վանական կանոնները թարգմանվել են հայերեն և Հայ Առաքելական Եկեղեցու վանքերի համար գործածվել են որպես սահմանադրություն: Գրքում առանձնացրել և վերլուծաբար ներկայացրել ենք Բարսեղ Մեծի կանոնադրության հիմնական դրույթները՝ հիմք ընդունելով հայերեն բնագիրը:

Մեր ուշադրությունը սևեռել ենք մեկ այլ կարևորագույն հարցի վրա ևս, այն է՝ եգիպտական ազդեցությամբ Վանական ուխտադրության ծիսակարգի ներմուծումը և կիրառումը Հայոց մեջ: Ընդ որում՝ հայ մատենագրության մեջ պահպանված «Կարգաւորութիւն Օրհնութիւնաբեր ցուցակի» բնագիրը (V դար) վկայություն է բովանդակում Վանական ուխտադրության երեք ծիսակարգերի մասին: Հայկական Մաշտոց ծիսամատյանը, որը ձևավորվել է «Օրհնութիւնաբեր ցուցակի» բնագրի հիման վրա, բովանդակում է Վանական ուխտադրության երկու ծիսական կանոն: Գրքում ցույց ենք տվել, որ հայկական սկզբնաղբյուրներին վերապահված է բացառիկ դեր. որպես ծիսակարգի ձևավորման բնօրրան՝ վկայված է Եգիպտոսը: Այսպես. ըստ Ցուցակի՝ Սքեմօրհնեքի առաջին կանոնը հեղինակել է Թեոդորոս Եպիսկոպոս Պամփյուլիացին սուրբ Անտոն Մեծի հրամանով, երկրորդը՝ հայր Ամոն Թեբայեցին, իսկ երրորդը՝ Սկյութացվոց լեռան վանականները: Մաշտոց ծիսամատյանում առկա է Վանական ուխտադրության երկու կանոն, որոնցից առաջինի խորագրում նշված է, որ այն գործածվել է Եգիպտոսում, Սուրբ լեռում, Պաղեստինում: Ենթադրելի է, որ Վանական ուխտադրության սույն կանոնը ստեղծվել է Եգիպտոսում, այնուհետ տարածվել նաև Սինայի և Պաղեստինի վանքերում:

Լուսաբանել ենք 354 թ. Աշտիշատի ժողովի որոշումները՝ կապված վանականության հետ. ժողովը սահմանել է վանականների և անապատականների համար երեք տեսակ բնակատեղի՝ վանքեր, մենաստաններ, խցեր: Ներկայացրել ենք, թե ինչ սահմանումներ են գործել մեր վանքերում: Ըստ այդմ՝ ընթերցողի ուշադրությունը սևեռել ենք Հայոց իրավական ժողովածուներին («Կանոնագիրք Հայոց», Դատաստանագրքեր)՝ քաղվածաբար առանձնացնելով կրոնավորներին վերաբերող կանոնները:

Որպես առանձին նյութ՝ ուսումնասիրել ենք վանականների ուտեստը և հայկական վանքերում ընդունված «Սեղան օրհնելու» հնավանդ կարգը: Մատենագրական սկզբնաղբյուրների հիման վրա ցույց ենք տվել, որ անապատականները և վանականները զուսպ են սնվել, կաթնամթերք քիչ են ճաշակել, միսը և գինին բացառված են եղել, շատերը սահմանափակվել են միայն խոտեղեն կամ ընդեղեն ուտելով:

Վանականները պահել են եկեղեցական օրացույցով սահմանված բոլոր օրապահքերը, շաբաթապահքերը և երեք Մեծ պահք՝ Աստվածհայտնության, Ջատկի և Վարդավառի: Վերլուծաբար ներկայացրել ենք «Կարգ եւ կանոն աղաթից» խորագրով մատենագրական միավորը, որը բովանդակում է Հայ Եկեղեցու Սեղանօրհների կարգը՝ սահմանված Թեղենյաց վանքում (ամենաուշը VIII-IX դդ.): Համադրելով այս բնագրում գրված աղթասացության կարգը տպագիր Ժամագրքի հետ՝ ցույց ենք տվել, որ այն, ենթարկվելով փոքր-ինչ խմբագրման, պահպանվել է մինչ օրս:

Սույն աշխատության այս հատորում հանգամանալիորեն վերլուծել ենք Հայ Եկեղեցու Մաշտոց ծիսամատյանում առկա Վանական ուխտադրության երկու ծեսերը՝ «Կանոն մոնոզոն առնելոյ հերակտրութեանն» և «Կանոն ձեռնադրութեան կրանաւորութեան սքեմ տալոյ»: Այս երկու ծիսակարգերը ներկայացրել ենք հիմնական բաժիններով՝ արարողություն եկեղեցու դռան առաջ և արարողություն եկեղեցու ներսում: Տվյալ ծեսերում կարևորել ենք հետևյալ հիմնական գործողությունները՝ Վկայություն, Հերակտրություն՝ (նվիրյալի վարսերը կտրելը), Սքեմօրհներք (նվիրյալին կրոնավորական հանդերձներ հագցնելը), Հաղորդություն կամ Սիրո ողջույն:

Հնարավոր է, որ մեր գրքում տեղ գտած որոշ մտքեր տարակարծությունների տեղի տան, նկատելի լինեն բացթողումներ, սակայն աշխատել ենք մեր կարողության սահմաններում, և ակնկալում ենք ընթերցողի ներողամտությունը՝ հավատարիմ մնալով մեր ձեռագիր ավանդությանը՝ «անմեղադիր լերուք սխալանացս, զի կարն մեր այս էր»:

Հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել աշխատության ընթացքում հանդիպող մի շարք նրբությունների վրա: Մեջբերումներ և հղումներ անելիս՝ բացառապես պահպանել ենք տվյալ սկզբնաղբյուրների ուղղագրություն-կետադրությունը (և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի դեպքում): Գլուխների խորագրերից հետո բերված ավետարանական բնաբանները, նյութի մեջ պատմագրքերից շատ մեջբերումներ ներկայացրել ենք աշխարհաբար՝ նպատակ ունենալով խոսքը մատչելի, դյուրըմբռնելի և հասկանալի դարձնել ընթերցողների լայն շրջանակի համար: Հետևելով աստվածաբանական մտածողությանը և

ելնելով նյութի բովանդակային առանձնահատկությունից՝ որոշ եզրեր և անվանումներ գրել ենք մեծատառով (օրինակ՝ Հայոց, Քրիստոնյա եկեղեցի, Պատարագ, Հաղորդություն, Խորան, Երկնքի արքայություն, Վանական ուխտադրություն, Մեծ պահք և այլն): Պահպանելով միօրինակություն՝ գրաբարյան մեջբերումներում «և»-ը հիմնականում գրել ենք երկնիչ՝ «ե»:

Հայոց վանականությանը նվիրված մեր ուսումնասիրությունը կատարել ենք դեռևս տարիներ առաջ (2010-2015, 2020 թթ.), սակայն ինչ-ինչ պատճառներով միայն այժմ կարողացանք աշխատանքն ամբողջացնել և հետազոտության մի հատվածը հանձնել ընթերցողի դատին:

Գրքի տպագրությանն աջակցելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Արայիկ Խզմայանին, փոխտնօրեն Վահե Թորոսյանին և հրատարակչության ղեկավար Հայկ Համբարձումյանին:

Գիտական խորհուրդների և բազմաթիվ օգտաշահ դիտարկումների, մանրազնին խմբագրական աշխատանքի համար երախտապարտ ենք պ. գ. դ., պրոֆ. Կարեն Մաթևոսյանին: Լեզվաոճական ճշգրտումների և սրբագրման համար շնորհակալ ենք մեր գործընկեր, բանասեր Գայանե Խաչատրյանին: Շնորհակալությամբ արձանագրենք, որ աշխատանքի ընթացքում տարաբնույթ հարցեր ենք քննարկել փ. գ. դ. Հակոբ Քյոսեյանի, Հայկազուն քահանա Սահակյանի և բ. գ. թ. Խաչիկ Հարությունյանի հետ: Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև լեզվաբան Վահան Մելքոնյանին, ա. գ. թ. Աստղիկ Մուշեղյանին, պ. գ. թ. Էյա Սարիբեկյանին:

Հարկ ենք համարում նշել, որ մինչ տպագրությունը, մեր անտիպ նյութերից տարբեր հատվածներ տրամադրել ենք վանականությամբ հետաքրքրվող մեր հոգևորական և աստվածաբան ընկերներին, այդ թվում՝ Անանիա աբեղա Ծատուրյանին՝ իր վարդապետական ատենախոսության համար¹:

¹ *Անանիա աբեղա Ծատուրյան, «Վանականների ուխտադրության կարգը Հայոց եկեղեցում» վարդապետական արենախոսություն, Սբ. Էջմիածին, 2023:*

Գրքի տպագրության հիմնական նպատակն է լուսաբանել Հայաստանում կրոնավորական կենսակերպի տարբեր կողմերը, ինչպես նաև հատկանշել հայոց վանականության առանձնահատուկ դերը համաքրիստոնեական վանականության պատմության մեջ: Լիահույս ենք, որ մեր ուսումնասիրությունն օգտակար կլինի վանական կյանքի մասին առավել ճիշտ պատկերացում կազմելու համար, քանզի երբեմն այս առնչությամբ հնչում են ոչ պատշաճ կարծիքներ (օրինակ՝ վանականությունը ժամանակավրեպ է, կամ թե՛ վանական կանոնները ստորադասում են կանանց և այլն): Իրականում վանականությունը միշտ է այժմեական, այն իմաստով, որ քրիստոնեական ընկալմամբ՝ մարդու փրկության հեռանկարը դարաշրջան չի ճանաչում: Վանականությունը չի հարցնում ո՛չ ազգություն, ո՛չ սեռ, ո՛չ տարիք, և ո՛չ էլ վանական կանոնադրությունը որևէ մեկին խտրականորեն վերաբերվելու համար է: Վանականության գերնպատակը մարդու՝ այր թե կին, սրբացումն է և Աստծու հետ միավորումը:

Գիրքը նախատեսված է ինչպես մասնագետների, այնպես էլ՝ ընթերցողների լայն շրջանակի համար: Այս աշխատությամբ ցանկանում ենք դույզն-ինչ օգտակար լինել հատկապես նրանց, ովքեր փափագում են վերականգնել վանական կենցաղավարությունը Հայոց մեջ, վառ պահել հավատքի լույսը մեր հնամենի ու մշտաթթուն վանքերում և աղոթք վերածայնել առ Աստված՝ հանուն մեր Հայրենիքի հարատևության:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	7
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ.	
ԿԱՊԱԴԴՈՎԿՅԱՆ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	13
Կապադովկյան վանականությունը և Մշո Սուրբ Կարապետ վանքի հիմնադրումը	14
Բարսեղ Մեծի վանական կանոնադրության գործածությունը Հայոց մեջ	30
Վանական ուխտադրության եգիպտական ծիսակարգի կիրառումը	60
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	79
Աշտիշատի ժողովի որոշումները վանականության մասին	80
«Կանոնագիրք Հայոց»-ը վանականության մասին	83
Իրավական այլ ժողովածուները վանականության մասին	138
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ ԵՒ ՍԵՂԱՆ ՕՐՀՆԵԼՈՒ	
ԿԱՐԳԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒՄ	151
Անապատականների և վանականների սնունդն ըստ մատենագրական աղբյուրների	152
Սեղան օրհնելու կարգը հայկական վանքերում	173
ԳԼՈՒԽ ՉՐՐՈՐԴ. ՎԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ	
ՀԱՅՈՑ ԵՒ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ	193
Վանական ուխտադրության ծեսն ըստ «Արեոպագիտիկաներ»-ի.....	194
Վանական ուխտադրության ծեսի հայկական տարբերակը	202
Վանական ուխտադրության ծեսն այլ եկեղեցիներում	220
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..	228

ԼՈՒՍԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՒ
ԾԻՍԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ
ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Լեզվաոճական խմբագիր և սրբագրիչ՝ ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Շապիկը և ձևավորումը՝ ՏԻԳՐԱՆ ԱՊԻԿՅԱՆԻ
Հրատարակչական խմբագիր՝ ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Շապիկի պատկերը՝ ՄՇՈ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ

ISBN 978-9939-897-25-7



Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչություն
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (+374) 10 513033
publishing.matenadaran@gmail.com

Տպագրված է Copy Print տպագրատանը:
Չափը՝ 60 x 84 1/16: Ծավալը՝ 15 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ: